ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2023 թվականի N 65-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ N 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի N 17-Ն հրամանի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի N 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2023 թվականի մարտի 9-ի N 18 գրությունը՝ **որոշում եմ.**

1. *«Աբովյանի N 8 հիմնական դպրոց»* պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել *«Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան N 8 հիմնական դպրոց»* պետական ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հունվարի 16-ի ««ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 2 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *«Աբովյանի N 8 հիմնական դպրոց»* պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության տիտղոսաթերթում և կանոնադրության ընդհանուր դրույթներ բաժնում *«Աբովյանի N 8 հիմնական դպրոց»* բառերը փոխարինել *«Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան N 8 հիմնական դպրոց»* բառերով:

2) Հաստատել *«Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան N 8 հիմնական դպրոց»* պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել դպրոցի տնօրենին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական

անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրության մեջ կատարած փոփոխությունը գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի մարտի 15
ք. Հրազդան